



133. ՆՈՆՈ-ԴՌՆՈ

Նոնոն ու Դոնոն մարդ ու կնիկ են. Նոնոն մարդն էր, Դոնոն՝ կնիկ: Կունենան-չունենան մե սիրուն, խորոտիկ աղջիկ: Զաղջիկ կը կարգին, բուլամա խալան կառնին կը դնին սնդուկ:

Դոնոն օր մե հըրիսա կը դնե:

— Նոնո՛:

— Ի՞նչ է, Դոնո՛:

— Հըրիսեն հազըր է, էրթանք դաշտ փշու մե մըզի զվոնինք, սորա գանք դհըրիսեն ուտինք:

— էրթանք, Նոնո,— կըսե Դոնոն:

Գելնան դթունդրա բերան կը ծածկին, զփարեն քիսքով կը կապին ձողի գլուխ, կը տնկին տանքի վրեն, դդրսու դուռ լե կը փակին դբալնիք կը դնին դուռն դըրնդու վերև ու կէրթան դաշտ: Գեղեն օր դուս գելնան, ճամպորդ մե ուստ գիկա:

— Ախպե՛ր,— կըսին Նոնոն ու Դոնոն,— գինանք մեր դոնով պտի չընցնաս. հանդե ձող մե տնկուկ է վըր մեր տանքին, քիսըք մե փարա ուրնե կախ, դուռ փակուկ է, բալնիք դրուկ դըրնդու վրե, հրիսեն մըջ պուտկին թունդրա տակ գրուկ, չէղնի զմեր դուռ բանաս, զհրիսեն ուտիս, զմեր փարեն տանի՛ս:

— Չէ, ախպեր, չէ քուրիկ, իմ ի՞նչ դարդն է ձեր տուն, ձեր հրիսեն, ձեր փարեն, ես ճամպորդ իմ, կէրթամ հըտ իմ ճամպուն:

Նոնոն ու Դոնոն բեհոգ կէղնին, կէրթան դաշտ: Ճամպորդ դիկա տեսնա՝ օղորդման, ձող մե տնկուկ է վըր տանքին, ձեռք գերկընցու դըրնդու վերև, զբալնիք կը գտնա, զդուռ կը բանա, կէրթա կաշքե՛

պուտուկ լիք հրիսա դրուկ թունդրա տակ, զհրիսեն կուտե, զդուտ կը փակե, բալնիք կը դնե ուր տեղ, դելնա տանիք՝ ղձող դիջու, քիսքի փարեն կը դարտկե, դըլնա ուր ծոց, զձող կը տնկե, ու գընկնա ճամպա...

Նոնոն-Դոնոն դաշտեն կը դառնան, գիկան տուն, զդուտ կը բանան, կէրթան կաշքին՝ հրիսի պուտուկ դարտակ, դելնան տանիք, ղձող գիջուն, կը տեսնան քիսրք թրքով լիք, մաթ կը մնան, Դոնոն կը վերու կրսե. «Դո՛ր ելանի, դո՛ր պուպուզ անի, դո՛ր քաքանի»:

Օրերուց օր մե աղջիկ գընկնա Նոնո-Դոնոյի միտք:

— Նոնո՛:

— Ի՞նչ է, Դոնո՛:

— Չէրթա՞նք գմեր աղջիկ տեսնանք, ի՞նչ հալն է:

— Էրթանք, ըպա չէրթա՞նք:

Դոնոն կողով մե գաթա կը կողե կը դնե մառան, մարդ մե կը մտնա մառան, քանի մե հատ գաթա կը գողնա, փարջ մե ջրով լիք կը դնե գաթեստանու տակ: Լուսումութ՝ Նոնոն կը շալկե ղգաթի կողովն ու Դոնոյի հետ գընկնան ճամպա: Կողովն օր ժաժ փիկա՝ ջուր կը կաթկթա վըր Նոնոյի վզին:

— Դոնո՛:

— Ի՞նչ է, Նոնո՛:

— Յորի՞ն գդաթեք հմլե մե էլով իս շաղի, օր կը կաթկթա վըրսի:

Նոնո-Դոնոն կը հասնին խնամու տուն, զաղջիկ կը տեսնան, կուրախնան: Օր մե կը մտնան խնամու հավնոց, Դոնոն կը տեսնա. օր խնամու հավեր, խազեր, բազեր կը քջջվին ու քթթվին:

— Նոնո՛:

— Ի՞նչ է, Դոնո՛:

— Վո՛ւյ, քոռնամ ու կուրնամ ես. կը տեսնա՞ս խնամու հավեր, խազեր, բազեր կղտտած ու օջլոտած ին, էնոքի հմլա կը քջջվին: Իմ մաղսում աղջիկ լե բանից-գործից աչք կը բանա՞, օր լվա ու սանդրե:

Նոնոն-Դոնոն կը բերին մեծ պղինձ մե, կը դնին վըր օջիին. ջուր կէռցուն, կը բերին զհավեր, խազերն ու բազեր ու մեկ-մեկ, էրկու-էրկու կը կոխին մըջ էռման ջրին ու կը հանին-դնին մեկ դեն:

— Նոնո՛:

— Ի՞նչ է, Դոնո՛:

— Կը տեսնա՞ս խնամու հավ ու ճիվ իմալ ըռհաթան, անուշ-անուշ ուրանց քնած ին: Քոռնամ ես, իմ աղջիկ ի՞մալ պտի լողլը-ցուցեր իդա չըմեն:

Աղջիկ վըրեն կը հասնի, կը տեսնա հավեր, խաղերն ու բաղեր
քըմեն խաշած, սատկած ին:

— Քա վո՛ւյ, սեռվ շէղնի, մա՛րե, էդ ի՞նչ իս էրի:

— Ի՛մալ էնիմ, լա՛ո, հավեր, խաղերն ու բաղեր օջրաած են,
տաք ջրով լողկըցուցի, օր չքջջվին: Գինա՛մ դու պարապ չիս, օր
հա՛յ ու ճվին դառնաս:

Քանի՛մ օր չեսե խնամին զՆոնոն-Դոնոն ճամպու կը դնե: Տաս-
բսան դաղ կտավ, պուլիկ մե մեղր, հաց ու պանիր ու դաթա կը դնե
խնամոց հետ: Նոնո-Դոնոն ճամպու չեղր կը տեսնան ծառ մե՛ թա-
մու դեմ կը դողա:

— Նոնո՛:

— Ի՞նչ է, Դոնո:

— Ա՛խ, ա՛խ, ա՛խ, կը տեսնա՛ս, իդա խղճուկ ծառ կը մրսի,

կը դողդղա:

— Ի՞նչ էնինք,— կրսե Նոնոն:

— Ի՞նչ պտի էնինք, խնամու տված կտավ փաթթինք ծառի
ճղերու վրեն, չըմրսին, խեղճ ին:

Կտավ կը փաթթին ծառին ու դընցնան կէրթան: Կէրթան, կէր-
թան, կը տեսնան ամըռվա ճռիկ շոգեն դետին ճեղքվեր է:

— Նոնո՛:

— Ի՞նչ է, Դոնո:

— Վո՛ւյ, քոռնամ ես:

— Ի՞նչ է էղի:

— Քա վո՛ւյ, սեռվ շէղնի. չըս տե՛սնա, գետին ի՛մալ ծառվըցի,
օր դուր բերան գազ մե բացեր է, կը հըլըբա. վա՛խ, վա՛խ, վա՛խ:

— Ի՞նչ էնինք:

— Ինչ էնի՛նք, հըլա կաներ իս:

— Բի գէն պուլիկ մեղր լցինք ի բերան, մեղք է, բալթիմսի
չետնի ծառավն քընցնա:

Կը բերին ղպուկի մեղր կը լցին գետնի ճեղքի մեջ, գընցնան
կէրթան ուրանց տոմ:

Իրեք խնձոր իջավ էրկընքեն՝ մեկ Նոնոյին, մեկ Դոնոյին, մեկ
լե վին օր Նոնո-Դոնոն ըսին:

